



ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԱՅԻ

Գերաշնորհ Ս. Վահան Եպս Յովհաննէսեան Առաջնորդ

DIOCESE DE FRANCE DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE

Son Excellence Monseigneur Vahan Hovhannessian, Primat de France

Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեան  
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի թեմի առաջնորդ  
Պակգամ 1915 ի ցեղասպանութեան 105-րդ ամեակի առիթով

Միրելի Ժողովուրդ Հայոց Ֆրանսայի,

Ահաւասիկ անգամ մը ևս, օրերը մեզ կառաջնորդեն դեպի ապրիլ 24, երբ մենք, որպէս ազգ, կը նշենք յիմատակը մեր 1,5 միլիոն նահատակներուն և հարիւր հազարաւոր տարագրուածներուն եւ աքսորներուն, որոնք ստիպուած լքեցին իրենց պապենկան հայրենիքը և անոնցմէ շատերը՝ մինչև իրենց մահը քալեցին անապատներուն մէջ, մինչդէռ աշխարհը ականատես կըլլար քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեան:

Այսօր դժբախտաբար, մենք ցաւօք սրտի կը հիշենք նաեւ աշխարհի պետութիւններու և ժամանակի գերիշխանութիւններու լռութիւնը ցեղասպանութեան հանդէպ, անոնք որոնք անտարբեր մնացին մեր ժողովրդի տառապանքներուն նկատմամբ՝ միաժամանակ հեռուէն դիտարկելով անոնց տառապանքն ու մահը:

Երբ մենք կը նշենք 20-րդ դարու պատմութեան ամենամութ էջերէն մեր ժողովուրդի ցեղասպանութիւնը, մենք կը նորոքենք նոյն ուխտը որ ցեղասպանութիւնը վերապրողներու, մեր մեծ հայրերու, մեծ մայրերու և ծնողներու ուխտն էր՝ երբեք չի մոռնալ անոնց նահատակութիւնն ու չարչարանքը և շարունակել պահանջել անոնց համար արդարութիւն:

Մինչդէռ, որպէս զաւակներ, թոռնիկներ և թոռնորդիներ ծեղասպանութեան զոհերու, մենք դեռ պարտականութիւններ ունինք կատարելու: Նախ՝ շարունակել պատուել յիշատակը նահատակներուն: Մենք այսօր օրհնուած ենք այն սերունդը ըլլալու, որ 2015-ին ականատես եղաւ նահատակներու սրբադասման Սուրբ Էջմիածնի մէջ, որ ամենամեծ պատիւն է, որ եկեղեցին կարող է պարգեւել նահատակի մը: Մենք պետք է ընել ամէն ինչ որ հնարաւոր է, որպէսզի ամբողջ աշխարհը իմանայ անոնց զոհաբերութեան մասին և արդարութիւն պահանջել անոնց համար:

Մենք որպէս ազգ պարտականութիւնը ունինք նաեւ աշխատելու և նպաստելու ամրապնդման և իրթանման այն արժեգներուն որոնց համար անոնք զոհաբերեցին իրենց կեանքը՝ Հայրենիք, լեզու, մշակույթ, հաւատք և աւանդութիւն: Եթէ թշնամին այրած է


մեր Աստուածաշունչի հազարաւոր ձեռագիրները և կոտորած ու խոնարհեցուցած մեր եկեղեցիները, մենք պարտաւոր ենք այսօր ամէն չանք դափել ՝ վերականգնելու մեր եկեղեցին իր շէնքերով՝ ժողովուրդով եւ առաքելութեամբ: Եթէ թշնամին կը կտրէր լեզուները անոնց որոնք հայերէն կը խօսէին, մեր պարտականութիւնն է ապահովել, որ մեր զաւակները ու թոռիկները ապրին հայ, և ամէն ջանք թափել որ անոնք սորվին հայոց լեզուն և մշակույթը: .

Վերջապէս, մենք պարտաւոր ենք միաւորուած մնալ, որպէս մէկ ժողովուրդ Հայաստանի և սփիւռքի մէջ: Պարակտումն ու բաժանու,ը միայն կը տկարացնէ եւ թուլացնէ մեզ որպէս ազգ:

Եկէք՝ տասներկու միլիոն հայորդիներ արար-աշխարհ, կողք կողքի կանգնինք եւ միասին կերտենք ցեղասպանութեան դէմ մեր հաղթանակի ամենագորաւոր հուշարձանը:

«Յաւիտենական յիդատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: »

Օրհնութեամբ՝



Վահան Եպս. Յովհաննէսեան

Առաջնորդ

24 Ապրիլ 2020